



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՄ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ՆԱԽԱՐԱՐ
Է. ԳՐԻԳՈՐՅԱՆ

«04» 07 2019թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 000050

Ձեռնարկող՝

«Բազալտ» ԱԿ

Կողայքի մարզ, գ. Կամարիս

Գործունեությունը՝

Արամուսի բազալտների հանքավայրի Բազալտ
Կողամասի արդյունահանման շրջակա միջավայրի վրա
ազդեցության գնահատման հաշվետվություն
Կողայքի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի
տնօրենի պաշտոնակատար՝

Ա. Դոնոյան



ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆԵԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻԶԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱՇԽԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 000050

«04» 07 2019 р.

Արամուսի բազալտների հանքավայրի Բազալտ գեղամասի արդյունահանման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվեկը վություն

Պատվիրատու'

«Բազմութ» ԱԿ

Ներկայացված նյութեր՝

Ծրջակա միջավայրի վրա ազդեցության
գնահատման հաշվետվություն և
կից փաստաթղթեր

Գործունեության կատեգորիա՝ «Ա»

«У»

ՏԵՂԱԴՐՄԱՆ ՎԱյրը՝

Կոտայքի մարզի Կամարիս համայնք

Արամուսի բազալտների հանքավայրի Բազալտ տեղամասը վարչական առումով գտնվում է Կոտայքի մարզում և տեղակայված է Կամարիս գյուղի հարևանությամբ, գյուղից Նվազագույնը 350մ հեռավորության վրա:

Արամուսի բազալտների հանքավայրի Բազալտ տեղամասը (Նախկին Արամուս-2) հետախուզվել է 1969թ., իսկ 2006թ. օգոստոսի 1-ի դրությամբ կատարվել է տեղամասի վերագնահատում՝ հիմնականում 1969թ. անցած հետախուզա-փորվածքների տվյալների հիման վրա, որի արդյունքում տեղամասի պաշարները վերահաստատվել են <<ԷՊ Նախարարության ՕՀՊԳ-ի 2006թ հունիսի 10-ին N5 որոշմամբ՝ Յ կարգով 95,2հազ.լմ քանակով, բլոկային արտադրատեսակներ 29,6%, երեսապատման քար՝ 22,2%, շինաքար՝ 7,4%: Հանքավայրը շահագործվում է 1996թ-ից:

Տեղամասում կատարված շահագործական և լրահետախուզական (լեռնահատկացման սահմաններում) աշխատանքների արդյունքում ճշտվել են մակրացման ապարների (փուլսը-բեկորային և փուլտա) և օգտակար հաստվածքի հզորությունները:

Տեղամասի պաշարները վերահաշվարկվել են նախկինում եզրագծված 1-Բ և 2-Բ բլոկների սահմաններում: Միևնույն ժամանակ, լրահետախուզական փորվածքների տվյալներով եզրագծվել է (լեռնահատկացման սահմաններից դուրս) 3-Բ բլոկը:

Թույլատրելի է համարվել օգտակար հանածոյի օգտագործումը բրկցերի /ԳՈՍ 9479-2011/ և շինարարական քարի /ՀԱՏ 100-95/ արդյունահանումն ինչպես նաև շինարարական խճի /ՀԱՏ ԳՈՍ 8267-95/ արտադրության համար:

Ներկայացված ՇՄԱԳ հաշվետվությամբ նախատեսում է հանքավայրի շահագործում՝ վերահսկատված պաշարների արդյունքներով:



Պաշարների վերահաստատումից հետո հանքավայրից մարվել է շուրջ 2130խոր.մ պաշար 2-Բ բլոկից:

Հանքավայրում մնացորդային մարվող պաշարները կազմում են 1-B բլոկ - 49.2հազ.խոր.մ, 2-B բլոկ - 43.87հազ.խոր.մ:

Հայցվող տարածքի կոորդինատներն են՝ ARM WGS համակարգով՝

1-ին տեղամաս /Բլոկ 1- B/	2-րդ տեղամաս /Բլոկ 2- B/
8473069 4455661	8473296 4455651
8473081 4455762	8473388 4455686
8473182 4455741	8473529 4455686
8473172 4455651	8473599 4455604
	8473509. 4455568
	8473375 4455574

Հանքավայրի ծառալման ժամկետը կազմում է 24.47 տարի:

Օգտակար հանածոյի կազմաբանությունը և հանքավայրի լեռնատեխնիկական պայմանները թույլ են տալիս դրա մշակումը շարունակել բաց լեռնային աշխատանքներով:

Բազալտների արդյունահանումը նախատեսվում է իրականացնել հորատաեպային եղանակով, 5.0մ բարձրությամբ աստիճաններով /որը կարող է բաժանվել 2.5մ բարձրության ենթաստիճանների/՝ սեպանցքներում տեղադրվող հիորավիկ սեպերի օգնությամբ՝ առանց պայթեցման աշխատանքների: Վերջնական եզրագծում աստիճանները մարվող երկու աստիճանների միջև թողնվում է 2,0մ լայնությամբ բերմա: Նշված պայմաններով կառուցված բացահանքը կունենա հետևյալ պարամետրերը՝

1-B ပြနဲ့

- առավելագույն երկարությունը – 105մ;
 - առավելագույն լայնությունը – 95մ;
 - մշակման առավելագույն խորությունը – 17մ;
 - օտարության մակերեսը – 0.98հա:

2-B only

- առավելագույն երկարությունը – 300մ;
 - առավելագույն լայնությունը – 120մ;
 - մշակման առավելագույն խորությունը – 30մ;
 - օրապոման մակերեսը – 2.55հա:

Բազալտների արդյունահանման ժամանակ նախագծային կորուստներն են՝ ըստ լեռնատեխնիկական պայմանների, որոնք կազմում են 7445.6իմ կամ 8.0% և շահագործողական կորուստներ՝ 0.5%:

Ըստ տեխնիկական առաջադրանքի հանքավայրի շահագործման տարեկան ստրողականությունն ընդունված է 3500խմ/տարի արդյունահանվող պաշր:

Հանքավայրը փաստացի շահագործվում է և բացահանքի բացման աշխատանքներ, որպես այդպիսին չեն նախատեսվում: Շահագործմանը զուգընթաց իրականացվելու է 2-Բ բլոկի 1600մ նիշ ունեցող հորիզոնի բացում:

Բացահանքերի եզրագծում մակաբացման ապարները /2.85-5.0մ հզորությամբ/ ներկայացված են 2.0-3.5մ հզորությամբ փխրուն-բեկորային բերվածքային ապարներով և 0.85-1.5մ հողմնահարված բազալտներով՝ համապատասխանաբար 109730իմ և 44770իմ:

Մակարացման ապարների հեռացումը կատարվելու է բուշտողեր-էքսկավատոր-ավտոինքնաթափ լեռնատրասպորտային համալիրի օգնությամբ:

Ելնելով հանքավայրի լեռնատեխնիկական պայմաններից, հանքաշերտի մշակման ժամանակ ընդունվում է ընդլայնական, միակողմանի, խորացող մշակման համակարգ,



մակարացման ապարները՝ հիմնականում ներքին և մասամբ արտաքին ժամանակավոր լցակույտ տեղափոխմամբ:

Բլոկների արդյունահանման ժամանակ առաջացած խճի հումքը 2464իմ տարեկան կամ 9.48իմ/հերթ ծավալով, աշխատանքային հորիզոնում Ճ3-170.01 մակնիշի բուղողերով տեղափոխվելու և կուտակվելու են հանքախորշից 10-15մ հեռավորության վրա, այսուհետև կուտակված թափոնները Յօրոնեջ-5124 մակնիշի միաշերեփ էքսկավատորով բարձվելու են ԿրԱ3-2565 մակնիշի ավտոհներնաթափի մեջ և տեղափոխվելու են գոյություն ունեցող ԶՏ կայանը, որը գտնվում է հանքավայրից նվազագույնը 5կմ հեռավորության վրա, բազալտ խճի արտադրության համար:

Բացահանքերի լցակույտ առաջացնող ապարները ընդամենը՝ 154500խմ ծավալով ներկայացված են բերվածքային ապարներով՝ 109730խմ և փուշտայի շերտով՝ 44770խմ ծավալով: 2-Բ բլոկի բացահանքի մինչև 1580մ նիշ ունեցող հորիզոնի շահագործումը՝ մակաբացման ապարները 83080խմ ծավալով տեղափոխվելու են նշված բացահանքի հարավ-արևմտյան մասում գտնվող մշակված տարածությունում /այն դուրս է հաստատված պաշարների եզրագծից/՝ 66630խմ ծավալով և 1-Բ բլոկի բացահանքի հարավային մասում ծևավորվող ժամանակավոր արտաքին լցակույտում՝ 16450խմ:

2-В բլոկի բացահանքի 1580մ նիշ ունեցող հորիզոնից ներքև, ինչպես նաև ամբողջ 1-
Բ բլոկի բացահանքի շահագործումից առաջացող մակաբացման ապարները կուտակվելու
են ներքին ներբացահանքային լցակույտերում:

2-Բ բլոկի բացահանքի 1580մ նիշ ունեցող հորիզոնի շահագործմանն զուգընթաց ժամանակավոր արտաքին լցակույտի ապարները տեղափոխվելու են Ներբացահանքային տարածք և հարթեցվելու են:

Արտաքին լցակոյսի առավելագույն բարձրությունը կկազմի 11մ, օտարման մակերեսը 0.8հա, վերևի հարթակի մակերեսը 0.5հա:

Ուեկուտիվացվող ընդհանուր տարածքը կազմելու է 4.2հա: Շահագործման աշխատանքների ավարտից հետո կատարվելու է ներքին լցակուսի մակերևույթի վերջնական հարթեցում, որի իրականացման համար նախատեսված է 2751.95 հազ. << դրամ:

Բացահանքի ջրամատակարարումը կատարվելու է բացահանքի արդյունաբերական հրապարակը խմելու ջրով ապահովելու, ինչպես նաև փոշենստեցման նպատակով աշխատանքային հրապարակների, ավտոճանապարհների և լցակույտի մակերևույթի ջրման համար:

Խմելու ջուր բերվելու է ԱԲ1.2 մակնիշի կցովի ջրի ցիստեռնով մոտակա գյուղից: Տեխնիկական ջուրը մատակարարվելու է KO-002 մակնիշի ջրան լվացող ավտոմեքենայով Կոտայքի ոռոգման համակարգից:

Համաձայն հանքավայրի ջրաերկրաբանական պայմանների՝ ստորգետնյա ջրերը հանքավայրի տարածքում բացակայում են:

Բացահանքի տարածքը թափվող հորդ անձրևային ջրերի մի մասը ներծծվում են բացահանքի հատակի ապարների ծակոտիների և ճեղքերի միջով, իսկ մյուս մասը հեռանում է հնընահնու կերպով:

Հանքավայրի հարակից տարածքներում բնության հատուկ պահպանվող տարածքներ չկան:

Բացահանքի տարածքում «ՀԿ Կարմիր գրքում գրանցված բուսական և մենանական տեսակներ չեն արձանագրվել, հանքավայրի տարածքում պատրության և մշակույթի անշարժ հուշարձաններ գրանցված չեն:

Հստ նախագծային փաստաթղթերի նախատեսված են **2024թվական** միջազգային
պահպանության ուղղված միջոցառումներ:



Տեղամասի շահագործման ընթացքում իրականացվելու է շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն ու մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումներ.

- մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ՝ շաբաթական մեկ անգամ հաճախականությամբ,

- լեռնատրանսպորտային սարքավորումների աշխատանքային վիճակի մասնավորապես չեղոքացուցիչ սարքավորումների սարքին վիճակի պարբերական մշտադիտարկումներ՝ տարին երկու անգամ հաճախականությամբ,

- օգտագործված մեքենայական յուղերով ու քայուղերով հողերի հնարավոր աղտոտումից խուափելու նպատակով հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ տարին մեկ անգամ հաճախականությամբ:

Զրային ավագանի աղտոտում տեղի չի ունենա, քանի որ տարածքում գրունտային ջրերը բացակայում են, իսկ լեռնային աշխատանքների տեխնոլոգիայով արտահոսքեր չեն կանխատեսվում: Օրենսդրությամբ սահմանված կարգով Կոտայքի մարզի Կամարիս համայնքում իրականացվել են հանրային քննարկումներ, որոնց ընթացքում տեղական ինքնակառավարման մարմինները և հասարակայնությունը հավանություն են տվել նախագծի իրականացմանը: Փորձաքննական գործընթացին մասնակցել են շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները: Փորձաքննական գործընթացում կատարվել են ՇՄԱԳ հաշվետվության լրամշակումներ և հաշվի են առնվել ներկայացված առաջարկություններն ու դիտողությունները: Առկա է <<Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն>> ՊՈԱԿ-ի դրական փորձաքննական եզրակացությունը:

Փորձաքննական պահանջներ

Հանքարդյունահանման աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է պարբերաբար իրականացնել շրջակա միջավայրի բաղադրիչների մոնիթորինգ և արդյունքները << կառավարության 22.02.2018թ.-ի N191-Ն որոշմամբ սահմանված ժամկետներում և ծևաչափով՝ ներկայացնել շրջակա միջավայրի նախարարություն: >>

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

<<Բազալտ>> ԱԿ-ի կողմից ներկայացված Արամուսի բազալտների հանքավայրի Բազալտ տեղամասի արդյունահանման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն, վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Գլխ. մասնագետ

Զ. Զուտնացյան

